

վանիոյ, Պետարապիոյ եւ յարակից երկրամասերուն մէջ, ցարդ մեծ մասամբ մեզի անձանօթ եւ չուսումնասիրուած :

Գորդ-կապերտի մասին մասնաւորելով, կրնամ ըսել որ անցեալին մէջ հայերը փոխ տուած են այդ արուեստը, որ մինչեւ մեր օրերը վերոյիշեալ հողամասերուն բնիկները կ'օգտագործէին : Ռումանական կապերտները (քիլիմ) գծագրական հարադատութիւնը կը պահեն իրենց բնատուր հայկականներուն : Բնական է, շնորհիւ զանազան շրջաններու գաղթականութեանց՝ նոր ի նորոյ ներարկումներ եղած են տեղական հիւսուածեղէններու արհեստ արուեստին մէջ : Գրեթէ Քրիստոսի Ե դարէն առաջ սկսեալ այս հայկական բնագաղթները նոր արիւն ստացած են Բիւզանդական կայսրերու շնորհիւ, յետոյ Սելճուզ եւ Թաթար արշաւանքներու պատճառաւ, ԺԲ-ԺԴ դար, հայ գաղթականութեան նոր խումբեր Անիէն, եւն., եկած են հոս՝ հայկականութիւնը թարմացնելու : Թուրք-Պարսիկ պատերազմները եւ հալածանքները ԺԶ - ԺԷ դարերուն՝ գաղթական հայերու մեծ խումբեր բերած են, նա մանաւանդ Թոքաթէն եւ այլն : Յետոյ ԺԸ դարուն Լեզկի-Թուրք-Պարսիկ վայրագութիւնները պարպած են հայութիւնը Շուտթէն, Նախիջևանէն եւ շրջաններէն ու զանոնք բերած եւ աւելցուցած է Պալքանեան հնագոյն գաղութի մնացորդներուն վրայ : Ինչպէս ըսի, բնական է որ այս հին ու նոր գաղթականները իրենց հետ բերէին նաեւ հայրենի մշակոյթը, ի վին մայր երկրին : Իրենց եկեղեցիները արժէքաւոր թանգարաններ են հայ արծաթագործութեան, հիւսուածեղէնի եւ այլ արուեստներուն՝ Պալքաններու մէջ դարգացման : Նիւթերը սակայն առ այժմ մեծ մասամբ անմատչելի են մեզի եւ յիշատակութեանց փոքր պատահիկներ ունիմ միայն, օրինակ՝ 1677ին Ֆիլիպէի Ս. Գէորդ եկեղեցւոյն նուիրացանկի մը մէջ կը վկայուի. «Աստուած լուսաւորեսցէ զհոգիս ննջեցելոց Մկրտչին Անկիւրցի, ետ յիշատակ մի կապերտ»⁽²⁾ :

Նորագոյն ժամանակներու համար ըսենք որ ԺԹ դարէն սկսեալ՝ Պուլկարիոյ զանազան կողմերը հայ արհեստագետներու ընդհանուր հսկողութեան տակ, հայ դրամագուլիւր սկսաւ դորդի դործարաններ հաստատել, որոնց արտադրութիւնը գլխաւորաբար Միացեալ Նահանգներ կ'արտածէր : Այս դորդերը կրնային մրցիլ Պարսկական դորդերու հետ՝ իրենց նրբութեամբ եւ ընտիր տեսակով : Նոյն առեն հոն կը շինուէին կոշտ դորդեր ալ, Փաղարճըզ կոչուած : Իբր թուական վրկայութիւն յիշենք որ 1930 Սեպտեմբերին Պուլկարիայէն Միացեալ Նահանգները ներմուծուած է 5,273 քառակուսի ոտք դորդ, 14,701 տոլար արժէքով, ուրեմն ոտքը, միջին հաշուով՝ 3 տոլար, որ այն առեն բարձր գին մըն էր դորդի համար :

(2) Յիշատակարան մը 1677էն, Ֆիլիպէի Ս. Գէորդ եկեղեցւոյն վրայօք : Յ. Քիւրտեան. «Քաղմովէպ», 1930, էջ 164 :